7-8 դասարան

3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1) Տարբերակների բառակապակցություններից ո՞րն է գործածվում «փոքրիկ» իմաստով:

Ա) մի ձեռք
Բ) մի մատ
Գ) մի աչք
Դ) մի հոնք

2) Այդ գետի անվան առաջին և վերջին տառերը այբուբենում չորրորդն են, երկրորդը և չորրորդը նույն տառն են, մեջտեղի տառը կօգնի գտնել գետի անունը: Ո՞ր գետի մասին է խոսքը:

Ա) Որոտան
Բ) Թարթառ
Գ) Դեբեդ
Դ) Արփա

3) Ի՞նչ չես գտնի Ամասիա բառում:

Ա) աշխարհամաս
Բ) երաժշտական նոտա
Գ) տարի բառի հին «ընկերը»
Դ) Արարատ լեռան անվանումներից մեկը

4) Տարբերակներում նշված տառերից ո՞րը կմիանա հավատ, շող, խաղ, լող բառերին, որ խնդրանք կամ հրաման կատարեն:
Ա) ք
Բ) ի
Գ) ա
Դ) դ

Վերարտադրումը միայն "Քոնթեստ.Էմ"-ի թույլտվությամբ

5) Տարբերակների պնդումներից ո՞րն է էականորեն տարբերվում մյուսներից:

Ա) Ես նստած եմ աթոռին:
Բ) Ես նստած եմ արևին:
Գ) Ես նստած եմ գորգին:
Դ) Ես նստած եմ խոտին:

6) Պատասխանի տարբերակների բառազույգերից մեկը որոշակի օրինաչափությամբ միահյուսվել-դարձել է նկարուց ցուցադրված գրվածքը: Ո՞ր բառազույգն է դա:

քեիրնաեզրայնաքի

Ա) քարհանք — երկրաբան
Բ) երկնաքեր — զինակիր
Գ) երազանք — հայրենիք
Դ) համայնք — եզրագիծ

7) Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:

Ա)ուշաթափվել
Բ)ուշ են եկել
Գ)ջնջված Ու և Ե
Դ)անուշ անել

8) Տարբերակներից ո՞րն է կապակցում հոտ և բյուր բառերը՝ լինելով մեկի հոմանիշը, մյուսի՝ գրաշրջումը (այսինքն՝ կազմված է նրա բոլոր տառերով):

Ա) հյուր
Բ) հոր
Գ) բույր
Դ) բույն

Վերարտադրումը միայն "Քոնթեսոս ԼԱԲ"-ի թույլտվությամբ

9) Տարբերակներից մեկն «առանձնացել է» մյուսներից: Ո՞ր բառն է դա:

Ա) տորմիղ
Բ) ճահուկ
Գ) սուսեր
Դ) հորան

10) Ի՞նչն է, որ կա ու մարմին չունի,
Լսում է ու ականջ չունի,
Խոսում է ու բերան չունի: (Ժողովրդական հանելուկ)

Ա) հեռուստացույց
Բ) ձայն
Գ) արձագանք
Դ) գետ

Վերահրապարակումը միայն "Քոնթեսոս ԼԱԲ"-ի թույլտվությամբ

4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11) Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:



Ա) ական
Բ) ավար
Գ) արան
Դ) ավարտ

12) Ո՞ր տարբերակի բառազույգը չի ենթարկվում ընդհանուր օրինաչափությանը:

Ա) հուր-հրե
Բ) քերծ-քերծե
Գ) սաթ-սաթե
Դ) փայտ-փայտե

13) Վիրաբույժին անհրաժեշտ առարկաներից մեկը հնարամտորեն «թաքնվել» է բերված նախադասության մեջ:

Հանկարծ արշալույսին գետնախնձոր գտան խորոված:

Ա) աքցան
Բ) ունելի
Գ) նշտար
Դ) մկրատ

Վերարտադրումը միայն "Քոնթրոլս ԼԱԲ"-ի թույլտվությամբ

14) Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:

Ա) դպիր
Բ) պնդում
Գ) դպրոց
Դ) պինդ

15) Ո՞ր տարբերակի բառազույգն է իրարից տարբերվում հնչյունական կազմով:

Ա) Նարեկ - Կարեն
Բ) Արտավազդ - Վարազդատ
Գ) մտրակ - մկրատ
Դ) կարկատան – կտակարան

16) Ո՞ր հեքիաթային հերոսի անունն է գաղտնագրվել:

Մենվոխերեվոտյունիհիկեն

Ա) Մարդուկ-Ջարդուկ
Բ) Մոխրոտիկ
Գ) Մանչուկ
Դ) Մատնաչափիկ

17) Բազմազան է Հայաստանի բնությունը: Բազմաբերձ լեռներ, թավշապատ մարգագետիններ, մամռապատ ժայռեր, անդընդախոր ձորեր, ծաղկազարդ մարգահովիտներ: Հայաստանի բնությունը նկարագրող բառերում որոշակի օրինաչափությամբ ո՞ր տառերն են «կորել»:

Ա) ի, ու
Բ) ու, է
Գ) ո, ի, ու
Դ) ու, ա, ի

Վերարտադրումը միայն "Քոնթաստս ԼԱԲ"-ի թույլտվությամբ

18) Ո՞ր կենդանիների խմբի անվանումը կստանաս, եթե ջնջես վանդակի այն տառերը, որոնք կրկնվում են հինգական անգամ:

ե	ճ	մ	ր	ռ	հ
հ	մ	խ	ռ	ե	մ
ա	ռ	ճ	հ	ի	ե
մ	ճ	հ	մ	ե	հ
ռ	ե	ճ	ռ	ն	ճ

Ա) աղվեսների
Բ) ձիերի
Գ) այծերի
Դ) կովերի

19) Բաց թողնված տեղերում ո՞ր բաղաձայն հնչյունն է ամենաշատ գործածվում, որ կազմվեն աշխարհագրական անուններ:

Ա – ա – ա-
Ա– ա – ա-
Ա– ա – ա-
Ա– ա – ա-

Ա) Տ
Բ) Գ
Գ) Ն
Դ) Ր

20) Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:

Ա) ամսանուն
Բ) թռչնանուն
Գ) ծաղկանուն
Դ) տղայի անուն



Վերարտադրումը միայն "Քոնթեսոնի" թույլտվությամբ

5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21) *Տեղ*-ը ո՞ր տարբերակին միանա, որ «տեղավորվի» այս կյանքի մեջ:

Ա) անել
Բ) գտնել
Գ) գցել
Դ) նստել

22) Ո՞ր հայ արքան է թաքնվել հայկական քաղաքների շարքում:

Աշտարակ, Ջերմուկ, Վեդի, Սևան, Արտաշատ

Ա) Մենուա
Բ) Գագիկ
Գ) Տրդատ
Դ) Արշակ

23) Գաղտնի տեղեկություններ հաղորդելու համար մեր նախնիները ստեղծել են «կոտորակագիր» կոչվող ծածկագիրը, որում հայոց այբուբենի յուրաքանչյուր տառ ներկայացվում է որպես կետերից ու մի գծիկից բաղկացած պատկեր: Այդ տառերից երեքը երևում են նկար 1-ում: Կռահիր, թե ինչ օրինաչափությամբ են կետերը կապված տառերի հետ, և որոշիր, թե ինչ բառ է ծածկագրված նկար 2-ում:

Նկար 1



Նկար 2



Ա) երազանք
Բ) ընտանիք
Գ) հայրենիք
Դ) ուսուցչուհի

Վերահրատարակվում է "Քոնթեսոս Լաո"-ի թույլտվությամբ

24) Անգետիկը գրատախտակին գրել էր *<u>նշխարհ, շնորհք, ապաշխարհել, պատճե, խառնիճաղանչ, զեղչել, ընթերցել, առհամարել, փռփռալ, պարկել</u>* բառերը: Գիտունիկը կարդաց և ուղղեց սխալները: Քանի՞սխալ էր արել Անգետիկը:

Ա) 4
Բ) 5
Գ) 6
Դ) 7

25) Այդ չարաճճին որոշակի օրինաչափությամբ թաքնվել է *<u>կրակ, ականջ, այգի, համեղ, տետր, աղջիկ, հսկա</u>* բառաշարքում: Ո՞վ կամ ի՞նչ է նա:

Ա) ծովային կենդանի
Բ) կենդանակերպի նշան
Գ) հեքիաթային հերոս
Դ) բանջարեղեն

26) Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:

50/1; 20/3; 70/1; 10/2; 20/2, 10/1, 40/4; 50/5

Ա) հարձակում
Բ) հաղթանակ
Գ) հայրենիք
Դ) Հայաստան

27) Եթե բոլոր ամսանունները դասավորենք այբբենական կարգով, ապա տարվա չորրորդ ամիս ապրիլն այդ ցանկում կհայտնվի առաջին հորիզոնականում: Ըստ հերթականության՝ ո՞րերորդ տեղը կզբաղեցնի փետրվարը այբբենական այդ ցուցակում:

Ա) երկրորդ
Բ) հինգերորդ
Գ) իններորդ
Դ) տասնմեկերորդ

Վերապատրաստումը միայն հանրակրթության Լաբ հիմնադրամի

28) Ո՞ր ժողովրդական առածն է ծածկագրվել թվային շարքում:

1; 200; 5; 400; 2; 1; 400; 20; 3000; 5; 5000; 900; 400; 7; 3; 600; 3000; 5; 30; 20:

Ա) Ամեն բանի վերջն է գովելի:
Բ) Ամառվա փուշը, ձմեռվա նուշը:
Գ) Աշխարհի շինողն ու քանդողը լեզուն է:
Դ) Ասա՝ ով է ընկերդ, ասեմ՝ ով ես դու:

29) Տրված տարբերակների բառազույգերը աճպարարական ինչ-որ հնարքով նորանում են: Ո՞ր տարբերակի բառազույգն է զուրկ այդ շնորհքից:

Ա) բարդ-ծուռ
Բ) խեժ-հազ
Գ) գեթ-կաթ
Դ) հարկ-ծեգ

30) Ի՞նչ թիվ է թաքցրել մեղվիկը:

Փետրվար - 27
Մարտ - 34
Մայիս - 55
Հուլիս - 75
Սեպտեմբեր -

Ա) 96
Բ) 99
Գ) 88
Դ) 86

Վերահրատարակումը միայն "Քոնթեսայ Սաբ"-ի թույլտվությամբ